ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով «2015թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու» ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33/4 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի(պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա)թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև, /հազ.դրամ/

	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	Ընդ.
Եկամտայինմաս	446758.1	22500	446758.1
Ծախսայինմաս	446758.1	66775.9	491034.0
Դեֆիցիտ	------	-44275.9	-44275.9
Պահուստայինֆոնդ	22500		

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 2-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 69 հոդվածի առաջին մասի, <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35/1 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Ըստ ստորև բերված վերլուծության համայնքի 2015 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականն ընդունել ի գիտություն:

	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	Ընդ.
Եկամտային մաս	202514.4	4696.9	207211.3
Ծախսային մաս	177748.7	15421.4	193170,1

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 3-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Արամ Ռիզկ Սարկիսսյանի լիազ. անձ Վարդան Մալխասյանի 08.06.2015թ. N 535՝ գյուղ. նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինության օրինականացման մասին դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. N912-Ն և 29.12.2011թ. N1920-Ն որոշումների պահանջներով համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0694-0066 ծածկագրում գտնվող, Արամ Ռիզկ Սարկիսսյանին սեփականության իրավունքով պատկանող 4518քմ գյուղատնտեսական նշանակության վարելահողում ինքնակամ բնակելի նշանակության շինությամբ զբաղեցված և շինության պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 300քմ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

N 4-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս է մնացել Ն. Աշտարակեցու փողոցի N12 բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և բակային հատվածով ծանրաբեռնված 042-019 ծածկագրով 2197քմ հողամասը, ինչպես նաև 324-005 ծածկագրով 907.2քմ բնակավայրերի նշանակության հողամասը, նկատի ունենալով, որ վերը նշված հողամասերը իրականում հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի 2-րդ մասի, 49 և 50-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. հմ. 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը՝ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող 042-019 ծածկագրով 2197քմ բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման և 324-005 ծածկագրով 907.2քմ բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

N 5-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 7 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ	

Չի մասնակցել Տ. Գալստյանը

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Հավելված 1

Հողերի աճուրդ-վաճառք

Լոտ	*Անվանումը*	*Գտնվելու վայրը*	*Ծածկագիրը*	*Մակերեսը /քմ/*	*Նպատակային նշանակությունը*	*Հողատեսքը*	*Գործառնական նշանակությունը*	*Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/*	*Սահմանափակումներ*
1	հողատարածք	Տ. Մեծի 20 շենքի հարևանությամբ	106-001-ից	27	բնակավայրերի		բնակելի	65	
2	հողատարածք	Ն. Աշտարակեցու N31	177-041-ից	1160	բնակավայրերի		հասարակական	60	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը հուլիսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.12.2014Թ. ՀՄ 2-Ա <ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/

Ն 6-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26, 28, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 9, 27 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 04.12.2014թ.-ի հմ 2-Ա <Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին> որոշման հավելված 2-ում կատարել փոփոխություն, ավելացնելով <Աշտարակ համայնքում առևտրի և ծառայությունների կանոնակարգման, փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների համակարգող> միավորը, դրույքաչափը սահմանելով 90 000 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի օգոստոսի 1-ից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 7 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ	

Չի մասնակցել Տ. Գալստյանը

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**